Ս. Դ. ԱՎԱԳՅԱՆ

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՕՐԴԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՄԱՐԸ

Ղարաբաղի պարբերական մամուլի պատմության մեջ ամենից ուշագրավ էջը պատկանում է «Նեցուկ»-ին։ Սա այն թերթն էր, որ Աշոտ Հովհաննիսյանի ղեկավարությամբ 1917 թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին հենարան ու զորավիգ էր երկրամասի բոլշևիկների համար՝ աշխատավորներին վճռական պայքարի դուրս բերելու հակահեղափոխական ուժերի դեմ։

«Նեցուկ»-ը բոլոր հարցերում ելնում էր մարքսիզմի դիրքերից, պրոպագանդում էր լենինյան գաղափարները, լայնորեն լուսաբանում Շուշիի կուսակցական կազմակերպության առօրյա հարցերը։

Նրա էջերում հանդես եկողները բոլշևիկներ էին՝ մարքս-լենինյան ուսմունքի խոր գիտակներ, որոնք գործնական աշխատանքը հմտորեն զուգակցում էին տեսականին, բարձրացնում բանվորների և գյուղացիների քաղաքական մակարդակը։ Նշենք նրանցից հատկապես Հակոբ Հովհաննիսյանի, Ալեքսանդր Ծատուրյանի, Հակոբ Կամարու անունները, որոնց հոդվածները հագեցված են բարձր գաղափարայնությամբ և ուշագրավ փաստերին հաջորդում են կարևոր եզրահանգումները։

Հարկ է նշել, որ մինչև վերջերս հայտնի էր «Նեցուկ»-ի յոթ համար։ Սակայն թերթի խմբագրի արխիվում գտնված ութերորդ համարը նոր լույս է սփռում «Նեցուկ»-ի գործունեության վրա և ամբողջական պատկերացում է տալիս նրա անցած դժվարին, բայց փառավոր ուղու մասին։

Այս համարի լույս ընծայումը (1917 թ. հոկտեմբերի 20) հետապնդում էր որոշակի նպատակ. սկսվել էին Շուշիի քաղաքային դումայի ընտրությունները և «Նեցուկ»-ը պետք է ասեր իր խոսքը՝ բնութագրեր բոլշևիկներին և նրանց հակառակորդներին, բացատրեր, թե ինչ են ցանկանում կոմունիստները և ինչ հետին պլաններ ունեն բոլոր նրանք, ովքեր իրենց դեմքը թաքցնում են կեղծ դիմակի տակ։

Ընտրությունների կամպանիան սուր բնույթ է ստանում և առաջ է քաշվում մի քանի ցուցակ։

Թերթի առաջին և երկրորդ էջերի վրա, մի քանի անգամ, խոշոր տառերով գրված է, որ Շուշիի աշխատավորները պետք է ձայն տան երկրորդ ցուցակի օգտին, որի մեջ մտնում էին միայն բանվորական գործին նվիրված մարդիկ։ Այդ ցուցակում ընդգրկված էին 9 հոգի (Աշոտ Հովհաննիսյան, Մելիքսեթ Եսայան, Հակոբ Բեջանյան, Վարվառե Մելիք-Հայկազյան, Արմենակ Ղարագյոզյան, Գրիգոր Ներսիսյան, Սերգեյ Իսախանյան, Գրիգոր Հակոբյան, Նիկիտ Դանիելյան)։

Սրանց մի մասը մտավորական էր՝ պատմաբան, ուսուցիչ, իսկ մյուսները՝ բանվորներ։

Իր խոսքը ուղղելով բանվորներին, բանվորուհիներին, զինվորներին և բոլոր չքավոր գյուղացիներին, «Նեցուկ»-ը նշում է, թե ինչ հայացքներ ունեն սոցիալ-դեմոկրատ ինտերնացիոնալիստները, որն է նրանց պայքարի նպատակը։ Նա գրում է, որ «Սոցիալ-դեմոկրատ ինտերնացիոնալիստները դեմ են ժողովրդական միջոցներով մղվող թալանչիական, միլիոնավոր մարդկանց ոչնչացնող պատերազմին։ Կռվում են բուրժուաների աներևակայելի ավազակային օգուտների և պատերազմի առաջացրած սպեկուլյանտների անկուշտ ախորժակների դեմ։ Պահանջում են, որ կառավարությունը բաղկացած չլինի կապիտալիստներից և կալվածատերերից, որոնք հանգցնում են հեղափոխական խարույկը։ Դեմ են թալանչիական պատերազմը պաշտպանող, այսպես կոչված ազատության փոխառությանը։ Դեմ են ցարական և սև հարյուրյակային դումային, որ ուժեր է հավաքում՝ հեղափոխությունը ճնշելու և որն այժմ պահանջում է ցրել խորհուրդները։ Պահանջում են ժողովուրդների եղբայրությունն ստեղծող շուտափույթ հաշտություն...»։ Եվ այս ծրագրային փաստաթուղթը ավարտվում է հետևյալ մտքով. սոցիալ-դեմոկրատ ինտերնացիոնալիստները «կոիվ են մղում լայնացնելու, խորացնելու համար հեղափոխության նվաճումները, հեղափոխություն, որ կդառնա միջազգային և կբերե խաղաղություն. հաց. ազատություն» (բոլոր ընդգծումները թերթինն են—Ս. Ա.)։

«Նեցուկ»-ը հրապարակում է «Մեր մունիցիպալ պլատֆորմը» բավականին ծավալուն ծրագրային փաստաթուղթը, որտեղ որոշակիորեն ասվում է տրվյալ պահին հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության առջև կանգնած կարևոր խնդիրների մասին։ Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան անհրաժեշտ է համարում կյանքում իրականացնել քաղաքային ինքնավարության լրիվ դեմոկրատացումը, լիկվիդացնել պարենավորման ճգնաժամը և այլն։

Այնտեղ պարզ տրված է հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի տեսակետը պրոլետարական մասսաների դասակարգային պայքարի մասին, գրված է, որ «քաղաքային ինքնավարության ամբողջ քաղաքականությունը, քաղաքային տնտեսության ամբողջ կազմակերպությունը հիմնովին պիտի փոխվեն։ Մունիցիպալիտետը (դուման) պիտի դադարի մի խումբ բուրժուական-տերերի շահերի պաշտպանը լինելուց և պրոլետարիատի ու նրան հարող քաղաքի ազգաբնակության ամենաշքավոր մասի մղած կենսական պայքարի համար պատվար պիտի դառնա»։

Այդ հետաքրքիր փաստաթուղթը, որն ի դեպ, գրավում է թերթի 2-րդ, 3-րդ և 4-րդ էջերի ներքևի մասերը, ավարտվում է հետևյալ կոչով. «Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան, ինչպես դասակարգային և ինտերնացիոնալիստական կուսակցություն, մունիցիպալ քաղաքականության շրջանում ևս պետք է եռանդուն կերպով պայքար մղի ամեն մի շովինիզմի ու նացիոնալիզմի դեմ, որ ձգտում է բաժան-բաժան անել տարբեր ազգության պատկանող բանվորներին. հայ,— հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան,— միշտ և անհապաղ կոչ կանի բոլոր ազգերի պրոլետարներին և կիսապրոլետարներին ի մի խմբված սոցիալիզմի կարմիր դրոշակի տակ կոիվ մղել կապիտալիզմի դեմ։

Նրա նշանաբանն է՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք»։

Լինելով աշխատավորների շահերի պաշտպանը, թերթը պայքարում էր, որ նորից չբռնկվեն հայ-թուրքական կոտորածները, նորից ու նորից դաշնակցական-մուսավաթական թափթփուկները արյունահեղություններ չսարքեն, իրար դեմ չգրգռեն երկու բարեկամ ժողովուրդներին։

Թերթի խոսքը բարեկամության, ժողովուրդների եղբայրության մասին հնչում էր հաստատուն և խոհեմաբար, համոզող ու ազդեցիկ։ Այն ուներ դաստիարակչական մեծ նշանակություն։ Դրա առհավատչյան էր հայերի և ադրբեջանցիների բարեկամության ամրապնդումը ոչ միայն Շուշիում, այլև գավառի բոլոր գյուղերում։

«Նեցուկ»-ի վերջին համարում տպագրված է բոցաշունչ հրապարակախոս Սարդիս Դանիելյանի հոդվածը՝ «Մենշևիկ-հեղափոխականներն ու սոցիալիստ-հեղափոխականները» վերնագրով։ Այստեղ հեղինակը համոզիչ փաստերով բացահայտում է մենշևիկների և մյուս հակահեղափոխականների անփառունակ գործունեությունը, շեշտելով այն հանգամանքը, որ «Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատը, չքավոր գյուղացիությունն ու զորքը երես դարձրին մանրբուրժուական այդ սոցիալիստներից, որոնք հեղափոխությանը մահացու հարված են տալիս, դուրս շպրտեցին նրանց իրենց շարքերից և մտան սոցիալիզմին և ինտերնացիոնալին հավատարիմ մնացած բոլշևիկների և մենշևիկ-ինտերնացիոնալիստների կարմիր դրոշի տակ»։

Հոդվածագիրը համոզված էր, որ վերահաս սոցիալիստական հեղափոխությունը կփրկի բանվորներին ու գյուղացիներին և պայմաններ կստեղծի նոր, ազատ կյանքի համար։

Մի այլ ընդարձակ հոդվածում («Մեր հակառակորդները և մենք») «Նեցուկ»-ը նշավակում է բուրժուական և մանրբուրժուական տարրերին, որոնք մեծ վնաս էին հասցնում աշխատավոր ժողովրդի ազատագրման գործին. Նրանց մեղքով է,— գրում է Հակոբ Կամարին իր «Քաղաքային ընտրությունները» հոդվածում,— որ թշվառության մեջ են Շուշին և նրա բնակիչները։ Ի՞նչ է հարկավոր, որպեսզի վերականգնվի «նրա կյանքի քայքայված մեխանիզմը»։ Դիմելով բանվորներին և բոլոր քաղաքացիներին, Հ. Կամարին գրում է. «Դո՛ւք պետք է կազմակերպված վերցնեք այդ տնտեսությունն ու դնեք նրան նոր դեմոկրատական հիմքերի վրա։ Անհրաժեշտ է վերակազմել քաղաքի ամբողջ կյանքը՝ չքավոր դասակարգի կարիքների համաձայն»։

Հակոբ Կամարին տխրությամբ ներկայացնելով իր հայրենակիցների մռայլ առօրյան, ուղղակի նշում է, որ կյանքը այդպես էլ կշարունակվի, «քանի իշխանության գլխին կանգնած են կապիտալիստներն ու նրանց արբանյակները. բանի հեղափոխության թշնամիները, կարմիր ժապավենները թևերին կապած, կապիտալի միահեծանությունն են պատրաստում»։ Եվ նա իր հայրենակիցներին ասում է. «Եթե ուզում եք ազգաբնակությունը հաց ունենա, հրաժարվեցեք թալանչիական պատերազմը պաշտպանելուց. եթե ուզում եք չքավոր գյուղացիներին ազատել տուրքերի ծանրությունից, հրաժարվեցեք բուրժուական կառավարությունից, որ պաշտպանում է ունևորների թալանն ու սպեկուլյացիան։ Եթե ուզում եք իրականանա՛ ձեր պահանջները, պաշտպանեցեք հեղափոխությունը այն մութ և բացահայտ ուժերից, որոնք դեմոկրատական միլիցիայի փոխարեն ճգնում են հաստատել միապետական պոլիցիան։ Նրանք, որոնք կոչ են անում պաշտպանելու արյունահեղ պատերազմը, բուրժուական ու կոալիցիոն կառավարությունը. որոնք գաղտնի և համարձակ պաշտպանում են ցարի

ոստիկանությանը, սակայն խոստանում են լավ օրենքներ, հաց և ազատություն—ժողովրդի եղեռնագործ թշնամիներն են։

Ոչ մի հավատ այդ հանդուգն գիշատիչներին, ոչ մի ձայն հեղափոխության այդ գերեզմանափորներին»։

«Նեցուկ»-ը մինչև վերջ բացահայտում է բոլշևիկյան գործի հակառակորդների անփառունակ գործունեությունը, մերկացնում նրանց խոսքերի սնանկությունը։

«Նեցուկ»-ի խոսքը ներգործուն էր, ոգին՝ մարտական։ Նրա ութ համարներն էլ մեծ դեր խաղացին Շուշիի և, ընդհանրապես, Ղարաբաղի կուսակցական, քաղաքական և հասարակական կյանքում։ Նա ծնվեց այն օրերին, երբ Ղարաբաղը, իրոք «Նեցուկ»-ների խիստ կարիքն ուներ, երբ անհրաժեշտ էր բոլշևիկյան տպագիր օրգաններ, որոնք բարձր պահեին հեղափոխական դրոշը, պարզ ու հասկանալի լեզվով խոսեին իրավազուրկ մարդկանց հետ, մերկացնեին նրանց թշնամիներին, ջախջախիչ հարվածներ հասցնեին ամեն գույնի պառակտիչներին ու հակաբոլշևիկյան տարրերին։

Իր այդ միսիան «Նեցուկ»-ը կատարեց պատվով։ Նրա աշխատանքը բարձր գնահատեցին ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի օրգան «Բանվորի կոիվը», Բաքվի կոմիտեի օրգան «Բակինսկի ռաբոչի»-ն և այլ օրգաններ։

ԼԵՌՈՒԿ

№ 8

Հայաստանի Սոցիալ-Դեմոկրատական բանվորական կուսակցության (Բոլշևիկների և Մենշևիկ-ինտերնացիոնալիստների) Շուշու քաղաքային գումարի ձայնատուների թեկնածուների

№ 2 ՑՈՒՑԱԿ № 2

1. [illegible]
2. [illegible]
3. [illegible]
4. [illegible]
5. [illegible]
6. [illegible]
7. Խանտամիրովա Մարգարիտա - Դասատու
8. Ռոստոմյան Դերենիկ Գրիգորի - Բանվոր;
9. Խանմամեդովա Նինա Էլդարովնա - Հանրակ

№ 2

Голосую за списокъ

№ 2 Бакинскаго

социально демократическаго

Рос Соц Дем Раб Партии.

[illegible]

№ 2 ՑՈՒՑԱԿՈՒՆ

ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐ, ԲՈԼՇԵՎԻԿՈՒՀԻՆԵՐ ՀԵՆՇԵՎԻԿՆԵՐ ԵՎ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻՍՏՆԵՐ

ՀԱՅՆ ՏԻԽՐ № 2

Սոցիալ-Դեմոկրատ ինտերնացիոնալիստներ

Գեմ են մասնավոր սեփականության [illegible]

Գեմ են [illegible] ֆաբրիկաների և գործարանների անվճար տեղափոխումը [illegible]

Գեմ են [illegible] ազգերի [illegible]

Գեմ են [illegible] ազգերի [illegible]

Գեմ են [illegible] ազգերի